բենց երեսաց քրտինքով կ'ուտեն իրենց հացը։ — «Վնաս չունի, զրուցեցի վարժապետին, թող ամառը աշխատին, եթէ ձմեռը լաւ սորվին՝ այն ևս բաւական է նոցա»։ Մնաք բարով զրուցելով սիրուն և կայտառ հայ մանկութեան, նոցա պատուական Տէր-Հօր և վարժապետաց՝ առաջ գնացինք 'ի Թուիթի։

Սա ամէն գեղերէն բազմամարդն է. բնակչաց թիւը 2000 ի կը հասնի. այլ ինչպէս արտաքին ձևո
ն նոյնպէս և ներքին կառավարութեամբ բան զՍալա և զՁալթըր շատ յետամնաց։ Տներուն մէջ կարգ չկայ, Ղրիմու հին Թաթարաց գիւղերուն ճիշդ տիպարը կը կրէ հեռուէն ևս, զի մի ահագին մոխրակուտի դէզ կը ներկայացընէ, բոլորովին զուրկ 'ի բուսականութենէ. եթէ նորաշէն բարձրագիր եկեղեցին հեռուէն չերևայ, անկարելի կը լինի Թաթար գիւղէ զանազանելը։ Մօտեցանք եկեղեցւոյն, այլ դուռը գոց գտնելով՝ ինչանք դէպ 'ի դպրոց, զոր մեծ եկեղեցւոյն համեմատելով՝ յոյժ փոքր ինձ երևեցաւ. և երբ լսեցի որ ուսանողաց թիւը հարիւրէն շատ աւելի է, զարմացայ թէ ինչպէս այդ փոքր շէնքին մէջ կը հաւաքի այնչափ բազմութիւն։ Տղայ չկար ուսումնարանաց մէջ, զի կէս օրին տուն դարձել էին, պատուհանները և դռները բաց էին. սակայն և այնպէս ապականած էր շէնքին օդը։ Եկաւ երէցը, բացին եկեղեցւոյն դուռը. մտնելով ներս ընդարձակ տաճարին մէջ՝ ազատ չունչ առի. վասն զի այդ գեղեցկաշէն եկեղեցւոյն մէջ մարդ կը մոռանայ առ ժամն չորս դին պատող ճնշիչ առարկայքը։ Շքեղ է եկեղեցւոյս պատկերազարդ և ոսկեզօծ աւագ խորանին խաչկալը, որոյ շինութեան համար գիւղացիք 10,000 բուբլի ծախք